

## Տ ե ղ ե կ ա ն ք

2018թ. հուլիսի 12-ին ՀՀ քննչական կոմիտե է ստացվել ՀՀ վարչապետի կողմից ուղարկված՝ վերջինիս հասցեագրված քաղաքացու դիմումը՝ Ամուսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի վերաբերյալ: ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում նախապատրաստվել են նյութեր և 2018թ. հուլիսի 20-ին ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ՝ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից Ամուսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի շահագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկությունները ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ թաքցնելու առերևույթ դեպքի առթիվ:

Նախաքննությամբ տվյալներ են ստացվել, որ «Գեոթիմ» ՓԲ ընկերությունը, դեռևս 2009 թվականին ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությանն է ներկայացրել Ամուսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի երկրաբանա-հետախուզական աշխատանքների արդյունքները՝ պաշարների վերաբերյալ, որոնք հաստատվել են լիազոր մարմնի կողմից: Պարզվել է նաև, որ 2009, 2012, 2014 և 2016 թվականներին «Գեոթիմ» («Լիդիան Արմենիա») ՓԲ ընկերությունը ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ներկայացրել է Ամուսարի ոսկերեր քվարցիտների հանքավայրի հանքարդյունահանման համալիրի նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություններ և ստացել է դրական եզրակացություններ:

Քրեական գործով նախաքննության ընթացքում ձեռնարկվել և իրականացվել են մեծածավալ և բազմաբնույթ քննչական և դատավարական գործողություններ, հարցաքննվել են էկոլոգիական ոլորտի տարբեր բնագավառի բազմաթիվ մասնագետներ, բնապահպաններ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակիցներ, առգրավվել են ոլորտի վերաբերյալ մեծածավալ նյութեր և փաստաթղթեր, կատարվել են այլ քննչական և դատավարական գործողություններ:

Անհրաժեշտ տեղեկատվություն ստանալու համար վարույթն իրականացնող մարմինը պարբերաբար, քրեական գործի քննության ողջ ընթացքում կազմակերպվել և իրականացրել է ընդհանուր շուրջ երկու տասնյակից ավել հանդիպումներ և քննարկումներ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի գիտական ոլորտի առաջատար մասնագետների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպության փորձագետների հետ, տեղական փորձագետների հետ, ինչի արդյունքում ընդլայնվել է նախաքննության

առարկան, հստակեցվել են քրեական գործով բնապահպանական ոլորտի պարզաբանման ենթակա հանգամանքները:

Քննության ընթացքում էկոլոգիական բնագավառի մի շարք մասնագետներ ցուցմունքներ են տվել, որ «Գեոթիմ» ՓԲ ընկերությունը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ներկայացրած Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, ինչպես Բնապահպանական սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվություններում ոչ լրիվ ծավալով է հաշվի առել շրջակա միջավայրի քիմիական աղտոտման վերաբերյալ վտանգավոր ռիսկերը, քանի որ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման հետևանքով հանքավայրի ողջ մակերեսով տեղի կունենան երկրաբանական և երկրաքիմիական փոփոխություններ, որոնց արդյունքում կփոխվեն ոչ միայն վերգետնյա, այլև ստորգետնյա ջրերի քիմիական բաղադրությունը, ինչն էլ անվերականգնելի վնաս կհասցնի էկոհամակարգին: Մինչդեռ, վերը նշված հաշվետվություններում վտանգավոր ռիսկերը չեզոքացնելու վերաբերյալ մշակված մեխանիզմները հուսալի և հիմնավոր չեն:

Ամուլսարի հանքավայրի շահագործման հետևանքով շրջակա միջավայրի (հող, օդ, ջուր, բուսական, կենդանական աշխարհ) վրա վնասակար ազդեցության ռիսկերը, դրանց կանխարգելմանն ուղղված միջոցառումների հիմնավորվածությունը, ինչպես նաև ներկայացված՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման, Բնապահպանական սոցիալական ազդեցության գնահատման հաշվետվություններում, դրանց կից հավելվածներում արձանագրված հետազոտությունների գիտականորեն հիմնավորվածության և քրեական գործով մի շարք այլ էական հանգամանքներ պարզելու համար 2018թ. օգոստոսի 13-ին որոշում է կայացվել էկոլոգիական, երկրաբանական, հիդրոլոգիական, երկրաֆիզիկական, նյութագիտական, հողագիտական, քիմիական, տեխնոլոգիական, շինարարատեխնիկական և տնտեսագիտական համալիր փորձաքննություն նշանակելու մասին: Փորձաքննության կատարումը հանձնարարվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությանը: Միևնույն ժամանակ Երևանի պետական համալսարանից, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայից, այլ գիտական կառույցներից 22 մասնագետներ ՀՀ քրեական դատավարության 85-րդ հոդվածի կարգով նշանակվել են փորձագետ և ներգրավվել համալիր փորձաքննության կատարմանը:

Քրեական գործով փորձագետ են նշանակվել ստորև թվարկված մասնագետները.

1. Սամվել Աշոտի Առաքելյան	ԵՊՀ, երկրաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. Սարգիս Սամվելի Քելյան	ԵՊՀ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. Արմեն Հովհաննեսի Հովսեփյան	ՀՀ ԳԱԱ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ

	փոխտնօրեն, տեխնիկական գիտությունների դոկտոր
4. Նշան Հովհաննեսի Զուլումյան	ՀՀ ԳԱԱ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ փոխտնօրեն, քիմիական գիտությունների դոկտոր
5. Ղազար Լևոնի Գալոյան	ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի պետրոգրաֆիայի ու իզոտոպային երկրաբանության լաբորատորիայի վարիչ
6. Զոն Կոստիկի Կարապետյան	ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության» ՊՈԱԿ գիտաշխատող, երկրաբանական գիտությունների թեկնածու
7. Ռուլան Կոլյայի Գասպարյան	ՀՀ ԳԱԱ «Ա.Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության» ՊՈԱԿ գիտաշխատող,
8. Հովհաննես Սուրենի Նիկողոսյան	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲԸ բնապահպանության բաժնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու
9. Աշոտ Վարդգեսի Ասլանյան	ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու
10. Տիգրան Արթուրի Հայրապետյան	ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկանատին կից ուսումնական լաբորատորիայի վարիչ
11. Կարեն Արամայիսի Ղազարյան	ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
12. Նիկոլայ Բաբկենի Կնյազյան	ՀՀ ԳԱԱ «Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն, լաբորատորիայի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր
13. Սվետլանա Նիկոլայի Կրանվսկայա	«Լեռնամետալուրգիայի ինստիտուտ» ՓԲ ընկերության շրջակա միջավայրի պահպանության բաժնի սեկտորի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու
14. Աշոտ Մուսայելի Գալոյան	
15. Ռուբեն Սամվելի Պետրոսյան	ՀՀ բնապահպանության

	Նախարարության անտառային կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումներում խորհրդական, կենսաբանական գիտությունների թեկնածու
16. Վլադիմիր Ռուբենի Բոյանգրյան	ԵՊՀ «Աշխարհագրության և երկրաբանության» ֆակուլտետի քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի դասախոս, պրոֆեսոր, աշխարհագրական գիտությունների դոկտոր
17. Պավել Սեդրակի Ավետիսյան	«Հնագիտության և ազգագրության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր
18. Ժորա Առաքելի Աչոյան	ԵՊՀ «Աշխարհագրության և երկրաբանության» ֆակուլտետի հիդրոերկրաբանության և ինժեներական երկրաբանության ամբիոնի դասախոս, դոցենտ, տեխնիկական գիտությունների թեկնածու
19. Թրահել Գերասիմի Վարդանյան	ԵՊՀ, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
20. Արտավազդ Վրույրի Վանյան	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ, բժշկական գիտությունների թեկնածու
21. Մարատ Արիսի Գրիգորյան	ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան, երկրահանքաբանական գիտությունների թեկնածու
22. Նարինե Հմայակի Զաքարյան	ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի դոցենտ, կենսաբանական գիտությունների թեկնածու

Նախաքննության ընթացքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից ներկայացված հետազոտություններն իրականացվել են միջազգային հեղինակավոր և ոլորտի առաջատար կազմակերպությունների կողմից, որոշում է կայացվել համալիր փորձաքննության կատարմանը ներգրավել ոլորտի հեղինակավոր միջազգային ընկերության:

ՀՀ քննչական կոմիտեն, համագործակցելով ՀՀ բնապահպանության նախարարության հետ, բանակցել է Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակի բնապահպանական ծրագրերի քաղաքականության մշակման խորհրդատուի, իսկ ՀՀ բնապահպանության նախարարությունը՝ Բնական

նեսուրսների կառավարման (Natural resources governance institute (NRGI) միջազգային կառույցի հետ՝ վերջինիս միջոցով բնագավառի միջազգային հավատարմագրված կազմակերպությունների հետ բանակցություններ վարելու և նրանց համալիր փորձաքննության կատարմանը ներգրավելու ուղղությամբ: Բանակցությունների արդյունքում Բնական ռեսուրսների կառավարման (Natural resources governance institute (NRGI) միջազգային կառույցը գրավոր երաշխավորվել է, որ Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերությունը տարածաշրջանում լավագույնն է և ունի ուսումնասիրողների օբյեկտիվ թիմ:

Քրեական գործով անկախ փորձագիտական գնահատման նպատակով ՀՀ քննչական կոմիտեի կողմից 2018թ. նոյեմբերի 8-ին հայտարարվել է երկու փուլով միջազգային հավատարմագրված կազմակերպությունների նախատրակավորման ընթացակարգ և նույն օրը համապատասխան հայտարարությունը՝ հայերեն և անգլերեն լեզուներով տեղադրվել է ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնեական կայքում: Նշված հայտարարությունը տեղադրվել է նաև [www.devex.com](http://www.devex.com) կայքում: Միջազգային մրցույթին մասնակցելու հրավերներ են ուղարկվել տվյալ ոլորտի միջազգային կազմակերպություններին:

Հայտարարության տեքստը ներկայացվում է ստորև.

**Հայտարարություն՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտային հանքի շահագործման նպատակով կազմված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման միջազգային անկախ փորձագիտության նախատրակավորման ընթացակարգի վերաբերյալ**

Պատվիրատուն՝ ՀՀ քննչական կոմիտեն, որը գտնվում է ՀՀ, ք.Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում, Քրեական գործով անկախ փորձագիտական գնահատման նպատակով հայտարարում է երկու փուլով նախատրակավորման ընթացակարգ: Անկախ միջազգային փորձագիտական գնահատման առարկա են հանդիսանում **Ամուլսարի ոսկեբեր քվարցիտային հանքի շահագործման նպատակով կազմված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետև՝ ՇՄԱԳ) և բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (այսուհետև՝ ԲՍԱԳ) նախագծերը:**

Նախատրակավորման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է ներկայացնի՝

- 1) Ընկերության ընդհանուր նկարագիրը (նկարագիրը, գրանցման հավաստագիրը, գրանցման հասցեն եւ այլն)
- 2) վերջին 2 տարվա ընթացքում նման պահանջների հետ համադրելի բնույթի եւ բարդության առնվազն (10) նախագծերի ցանկ (ներառյալ հաճախորդների անունները / կապի մանրամասները):
- 3) հիմնական անձնակազմի որակավորումը եւ փորձը (առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ ունեցող առնվազն մեկ ղեկավար աշխատակից եւ

անձնակազմի առնվազն 1 տարվա համապատասխան փորձ ունեցող աշխատակից):

- 4) ընկերության կողմից իր նախկին եւ ընթացիկ պարտավորությունների կատարումը հավաստող փաստաթուղթ (հարկերի, տուրքերի եւ այլ պետական տուրքերի վճարում)
- 5) չունենա շահերի բախում, այդ թվում նաև անձնակազմի աշխատակիցները,
- 6) ունենա առնվազն 10 (տասը) տարվա գործունեության փորձ,
- 7) ունենա միջինը 5 (հինգ) տարվա աշխատանքային փորձով աշխատանքային ռեսուրսներ,
- 8) նվազագույն տարեկան շրջանառությունը ներկայացնող ֆինանսական հաշվետվություն (բնօրինակ փաստաթղթի պատճեն)

Մասնակիցը համարվում է որակավորման չափանիշին բավարարող, եթե ներկայացրել է պահանջվող տեղեկությունները:

Նախատրակավորման հայտը մասնակիցը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով՝ սույն հայտարարությունը հրապարակվելու օրվանից հաշված 6-րդ օրվա ժամը 12:00-ն, [press@investigative.am](mailto:press@investigative.am) էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

Նախատրակավորման հայտերը կարող են ներկայացվել հայերեն կամ անգլերեն: Մասնակցի կողմից կազմվող փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե նախատրակավորման հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ: Նպատակահարմարության դեպքում մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հայտարարությամբ առաջարկվող ձևերից տարբերվող այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները: Երկու փուլով մրցույթի գործընթացին հետագա մասնակցության իրավունք են ստանում նախատրակավորված մասնակիցների ցուցակում ընդգրկված մասնակիցները:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Յուրա Իվանյանին:

Հեռախոս

+37411880017,+37411880017+37411880017+37495749820  
 +37411880017+37411880017+37495749820+37411880017+37495749820  
 +37411880017+37411880017+37495749820+37411880017+37495749820+374118800  
 17+37495749820Էլ.փոստ՝ [press@investigative.am](mailto:press@investigative.am)

Պատվիրատու՝ ՀՀ քննչական կոմիտե

Մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել թվով 2 միջազգային մասնագիտական WSP UK և Advanced Resources Development (ELARD) ընկերությունները:

27.11.2018 թվականին նշված ընկերություններին ուղարկվել է մրցույթային տեխնիկական առաջադրանքը և առաջարկվել է ներկայացնել տեխնիկական առաջադրանքին համապատասխան՝ մրցութային առաջարկ, գործողությունների պլան, մասնագետների ցանկը, որոնք ներգրավվելու են համալիր փորձաքննության կատարմանը և գնային առաջարկ:

Տեխնիկական առաջադրանքը ներկայացվում է ստորև.

## **Տեխնիկական առաջադրանք**

**Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրի ջրային ռեսուրսների, երկրաբանության, կենսաբազմազանության և օդի որակի վրա շրջակա միջավայրի ազդեցության վերաբերյալ անկախ երրորդ կողմի փորձագիտական գնահատման մասին**

### **1. Ընդհանուր տեղեկություններ**

«Լիդիան Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Լիդիան Արմենիա) լեռնահանքային կազմակերպություն է և Լիդիան Ինթերնեյշնլ ԲԲԸ-ի դուստր ձեռնարկությունը, սկսել է Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրի ուսումնասիրությունը 2006 թվականին: Ամուլսարը լեռ է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզում, երկրի մայրաքաղաքից հարավ: 2016թ. ապրիլի 29-ին Լիդիան Արմենիան ստացել է ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ ԲՆ) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական եզրակացությունն Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրի վերաբերյալ:

2018 թվականի ամռանը ՀՀ քննչական կոմիտեն տեղեկատվություն է ստացել, որ ԲՆ համապատասխան մասնագետները, տեղյակ լինելով Ամուլսարի ոսկու հանքի շահագործման արդյունքում շրջակա միջավայրի հնարավոր աղտոտման վտանգավոր ռիսկերի մասին, գիտակցաբար թաքցրել են համապատասխան տեղեկատվությունը: Հաշվի առնելով այդ տվյալները և համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ քննչական կոմիտեն քրեական գործ է հարուցել 2018 թվականի հուլիսի 20-ին:

Քննչական կոմիտեն քրեական գործի շրջանակներում նախաձեռնել է այս մրցույթը՝ Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրի վերաբերյալ անկախ երրորդ կողմի փորձագիտական գնահատում ստանալու համար: Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 243, 244, 246, 248 և 249-րդ հոդվածների՝ քննչական կոմիտեն նախաձեռնել է Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրի հիդրոլոգիական, երկրաբանական, կենսաբազմազանության և օդի որակի հետ կապված ազդեցության համապարփակ գնահատում:

### **2.1. Ջրային ռեսուրսների վրա ազդեցության գնահատում**

#### **2.1.1. Համառոտ նկարագիր**

Երրորդ կողմի մասնակցությամբ ջրային ռեսուրսների վրա ազդեցության գնահատման գլխավոր նպատակն է 1) կառուցապատման, շահագործման և հետշահագործման հետ կապված տարբեր նախագծային գործողություններից բխող հնարավոր ազդեցության գնահատումը ջրային ռեսուրսների (մակերևութային և ստորերկրյա ջրեր) վրա և 2) առաջարկվող մեղմման միջոցառումների գնահատումը, որը ներառված է Ամուլսարի ոսկու հանքավայրի ծրագրի շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) հաշվետվության մեջ: Հնարավոր ազդեցություններ կարող են լինել.

- Ջերմուկի աղբյուրները, ներառյալ հիդրոթերմալայինները,
- Սևանա լիճը, Սպանդարյան-Կեչուտ թունելը և ջրամբարը, որ սնուցում է լիճը,
- Հանքարդյունաբերության հարևանությամբ գտնվող 7 համայնքի ջրամատակարարման աղբյուրները,
- Տարբեր աղբյուրներ, հատկապես հանքափոսերի հարևանությամբ գտնվողները, BRSF-ը հարակից տարածքներով և HLF-ի հարևանությամբ,
- 3 գետ՝ Արփա, Դարբ և Որոտան:

Վերանայումը կհանգեցնի ներքոնշյալ գնահատմանը.

1. Լիդիան Ինթերնեյշնլի գնահատումը ծրագրով նախատեսված տարածքում առկա հիդրոլոգիական/հիդրոերկրաբանական ռեժիմի՝ որպես ելակետային գնահատման մաս ՇՄՍԱԳ հաշվետվություններում, ներառյալ ենթամակերևութային և ստորերկրյա ջրերի փոխազդեցության նույնականացումն ու ջրաբաշխական բնութագրումը մակերևութային ջրերի հետ, ակունքային ջրերի և դրանց առաջացման մեխանիզմը, տարբեր ջրավազանների և, հատկապես, Ջերմուկի ջրավազանի միջև կապը, ինչպես նաև հնարավոր կապը խորքային ջրատար համակարգի հետ:
2. Գնահատման մեջ օգտագործված ստորերկրյա ջրերի առանցքային տվյալների համապատասխանությունը, ներառյալ, բայց չսահմանափակվելով ջրաչափի տվյալներով (2013), ջրի քիմիական կազմը (ներառյալ՝ ճառագայթման առկայությունը), երկրաքիմիական, օդերևութաբանական ու մակերևութային հոսքը:
3. Ստորերկրյա ջրերի մոդելի մշակում՝ ջրային հոսքերի և աղտոտված ճանապարհից խուսափելու համար, ջրի հաշվեկշռի գնահատում՝ մակերևութային ջրերի արտահոսքից խուսափելու համար:
4. Հնարավոր թթվային ապարների ճշգրիտ նույնականացում և բնութագրում, ARD-ի ազդեցության գնահատում գոյություն ունեցող ջրային ռեսուրսների վրա:
5. Առաջարկվող բնապահպանական մեղմման միջոցառումների համապատասխանությունը ջրային ռեսուրսների պահպանության համար բնականոն շահագործման և աղետալի դեպքերի ժամանակ, ինչպիսիք են ջրհեղեղներն ու երկրաշարժերը:

Գնահատումն հիմնված լինի գլխավորապես վերանայումից.



- ՇՄԱԳ բաժինները/ենթաբաժինները, որոնք վերաբերում են ջրերին (մակերևութային, ստորերկրյա և երկրաքիմիական)՝ ելակետային գնահատման, գնահատման ազդեցության և շրջակա միջավայրի կառավարման պլանի համար, ինչպես նաև դրանց առնչվող համապատասխան հավելվածները,
- շրջակա միջավայրի մոնիթորինգի հաշվետվություններն արվել են 2016 թվականից սկսած:
- ոչ ընդունելի/մերժված հաշվետվությունների սահմանափակ վերանայում Բրոնոզյանի փորձագետների կողմից:

Գնահատումը պետք է տա ջրային ռեսուրսներին վերաբերող այլ համապատասխան հարցերի պատասխաններ և պետք է ներառի գնահատման բաժնի և դրա ազդեցության բացթողնված տվյալները ՇՄԱԳ-ում կիրառվող մեթոդաբանության վրա:

## **2.2. Երկրաբանության վրա ազդեցության գնահատում**

### **2.2.1. Համառոտ նկարագիր**

Երկրաբանության վրա ազդեցության գնահատումը կիրականացվի միջազգային փորձագետների կողմից, որոնք մասնագիտացված են երկրաբանության և հիդրոերկրաբանության ազդեցության գնահատման ոլորտում: Փորձագետները կվերանայեն ՇՄԱԳ-ը, կայքի արբանյակային երկրաբանական տվյալները, տեղական փորձագետների համապատասխան գիտական հաշվետվությունները, ինչպես նաև ցանկացած այլ առկա ընթացիկ և արխիվացված տվյալները դիտարկվող տարածքի երկրաբանության վերաբերյալ, որպեսզի.

- հասկանալ և գնահատել Լիդիանի պահանջի գիտական ճշգրտությունը, որ Ամուլսարը առանձին երկրաբանական բլոկ է:
- գնահատել հավաքագրված երկրաֆիզիկական, երկրատեկտոնիկ և երկրաքիմիական տվյալները և կիրառված ՇՄԱԳ-ի մեթոդաբանությունը,
- գնահատել Ամուլսարի հանքաքարի երկրաքիմիական ուսումնասիրությունը:

## **2.3. Կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատում**

### **2.3.1. Համառոտ նկարագիր**

Կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատումը կիրականացվի միջազգային փորձագետների կողմից, որոնք մասնագիտացված են ցամաքային կենսաբազմազանության և շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ոլորտում: Փորձագետները կվերանայեն ՇՄԱԳ-ը, կայքի լուսանկարչական փաստաթղթերը, արբանյակային պատկերները, տեղական փորձագետների գիտական հաշվետվությունները, ինչպես նաև բնության պահպանությանը և տեսակների պահպանմանը վերաբերող համապատասխան իրավական տեքստերը.

- հասկանալու և գնահատելու ծրագրի ազդեցությունները բնական միջավայրի և կենսաբազմազանության վրա,
- իրականացնել առկա ՇՄԱԳ-ի պատշաճ ուսումնասիրություն՝ ստուգելու կենսաբազմազանության պահպանության և պաշտպանության համապատասխանությունը միջազգային ստանդարտներին,

- գնահատել ցեղին/ընտանիքին պատկանող տեսակների պահպանման կարգավիճակը ի թիվս այլոց /էնդեմիկ, խոցելի, հազվագյուտ/, ներառյալ մատնուհի /Potentilla/ ոզնաթուփ /Acantholimon/ և Ապոլոն /Parnassius/
- գնահատել ծրագրի կողմից առաջարկվող միջոցառումները շրջակա միջավայրի ազդեցության կրճատման/խուսափման համար:

## **2.4. Օդի որակի վրա ազդեցության գնահատում**

### **2.4.1. Համառոտ նկարագիր**

Օդի որակի վրա ազդեցության գնահատման վերանայման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել փոշու արտանետմանը և դրա հնարավոր ազդեցությանն առողջության վրա: Այս ամենը պետք է հանգեցնի սերտ համագործակցության երկրաքիմիական ոլորտի փորձագետների հետ՝ պարզելու համար առաջացող փոշու որակը, վերանայելու օդի որակի ազդեցության գնահատման համար օգտագործվող տվյալները, վերանայելու օդի տարածման մոդելավորման ուսումնասիրությունները, եթե այդպիսիք կան, ինչպես նաև առաջարկվող մեղմման միջոցառումների համապատասխանության գնահատումը: Հարակից համայնքներում փոշու առաջացման արդյունքում առողջության վրա ազդեցության գնահատման ծավալը ևս պետք է հաշվի առնել:

## **3. Տևողություն**

Գնահատումը պետք է իրականացվի պայմանագրի ստորագրումից ոչ պակաս քան 3 և ոչ ավել քան 4 ամսվա ընթացքում: Այս ժամանակահատվածում փորձագետները առնվազն երկու անգամ պետք է այցելեն տվյալ տարածք:

## **4. Եզրակացություն**

Այս գնահատումը անհրաժեշտ է մանրամասն հաշվետվություն ներկայացնելու համար, որտեղ ընդգծված և գնահատված են գիտական ճշգրտությամբ հավաքագրված փաստերը, առաջարկվող մեթոդաբանությունը և այն տրամաբանական եզրակացությունը, որը առաջարկվում և ներկայացվում է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) և շրջակա միջավայրի և սոցիալական ազդեցության գնահատման (ՇՄՍԱԳ) և որոնք վերաբերում են հիդրոլոգիայի, երկրաբանության, կենսաբազմազանության և օդի որակի բոլոր ոլորտներին՝ վերոնշյալին համապատասխան: Անհրաժեշտ է նաև մանրամասն գնահատել առաջարկվող մեղմման միջոցառումների արդյունավետությունը և դրանց միջազգային ստանդարտներին համապատասխանությունը: Գնահատումը պետք է ամբողջությամբ իր մեջ ներառի և հստակեցնի նաև հետևյալ հարցերի պատասխանները.

- Արդյոք Լիդիանի կողմից ներկայացված գնահատումները ՇՄԱԳ-ի և ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունում և դրանց կից հավելվածներում բավարար են, գիտականորեն հաստատված և համապարփակ, թե՛ ոչ. արդյոք եզրակացությունը ստացված է վստահելի և ճշգրիտ տվյալների հիման վրա և արդյոք եզրակացության համար մշակված մեթոդաբանությունը համապարփակ է և հուսալի:

- Արդյոք ՇՄԱԳ-ի և ՇՄՍԱԳ-ի հաշվետվություններում ներկայացված աղտոտված ջրերի, հանքային ջրերի հոսքի կառավարման մեթոդները գիտականորեն հաստատված և ճշգրտված են, թե՛ ոչ, արդյոք դրանք բխում են կանոնակարգի պահանջներից և միջազգային ստանդարտներից:
- Արդյոք անշարժ /կայուն/ աղբյուրների վերահսկման արդյունքները ճշգրիտ են, թե՛ ոչ, գիտականորեն արդյոք հաստատված են և համապատասխանում են կանոնակարգի պահանջներին, թե՛ ոչ: Եթե՛ ոչ, ապա գնահատումը պետք է ընդգրկի, թե ինչպիսին կլինեն անշարժ/կայուն/ աղբյուրների վերահսկման տվյալները և դրանց վտանգավոր ազդեցությունը օդի, ջրի, կենսառեսուրսների, հողի և բնակչության առողջության վրա:
- Արդյոք մոնիթորինգի ծրագիրը, որը ներկայացված է Լիդիանի ՇՄԱԳ և ՇՄՍԱԳ-ում, ներառում է բնապահպանական բոլոր անհրաժեշտ ոլորտները (հող, օդ, ջուր, բուսական և կենդանական աշխարհ, և այլն), և արդյոք ծրագրով նախատեսված միջոցառումները համապատասխանում են սահմանված ստանդարտներին, թե՛ ոչ:
- ՇՄԱԳ-ի և ՇՄՍԱԳ-ի հաշվետվություններում բնապահպանական անվտանգության տեսանկյունից հատկապես որ ռիսկերը հաշվի չեն առնվել: Այս բացթողնման արդյունքում ինչպիսի վնասներ կարող են առաջանալ բնակչության առողջության և շրջակա միջավայրի համար: Արդյոք այդ հնարավոր բացասական հետևանքները շտկելի են, թե՛ ոչ, իսկ եթե՛ այո, ինչ ֆինանսական միջոցներ անհրաժեշտ կլինեն:
- Արդյոք գոյություն ունի Ամուլսարի ջրավազանի, հարակից ստորգետնյա և մակերևութային ջրերի, գետերի, ջրամբարների, Սպանդարյան-Կեչուտի ջրամբարի հիդրոէլեկտրակայանի և Ջերմուկի հանքային ջրի ջրամբարի միջև փոխազդեցություն, թե՛ ոչ:
- Արդյոք ՇՄԱԳ-ում և ՇՄՍԱԳ-ում ներկայացված ապարների սուլֆիդային միացությունների վերաբերյալ տվյալները ճշգրիտ են, թե՛ ոչ, արդյոք թթվային դրենաժի վերահսկման մեթոդները գիտականորեն հաստատված են, թե՛ ոչ, արդյոք դրանք կարող են արդյունավետ կերպով կանխել ջրերի թթվային դրենաժի արտահոսքը շրջակա միջավայր:
- Կախված հանքաքարի քիմիական բաղադրությունից, ավլալահանված կույտի չափից և տեղանքից, և բաց հանքափորների և հետագայում հանքի փակման հետ կապված ծրագրերից, արդյոք հանքավայրերի որ տարածքներում է առավել հնարավոր թթվային դրենաժի առաջացումը և ինչ չափով է այն հնարավոր երկրաքիմիական գործընթացների և փոփոխությունների արդյունքում:
- Հնարավոր է արդյոք, որ թթվային դրենաժից հոսող ջրերը խառնվեն մակերևութային և ստորերկրյա ջրային համակարգերի հետ: Եթե՛ այո, ապա ինչ ժամանակահատվածում և ինչի հետևանքով կարող է այս արտահոսքը տարածվել մակերևույթի և ստորգետնյա ջրային համակարգում, ինչպիսի

քիմիական փոփոխություններ կառաջանան ջրերի բաղադրության մեջ, և ինչպիսին կլինեն հետևանքները: Այս հարցը վերաբերում է նաև Ջերմուկի, Որոտանի և Արփա գետերին, հարակից վտակներին և հոսանքներին, Սպանդարյանի և Կեչուտի ջրամբարային հիդրոտեխնիկական կառույցներին, Սևանա լճին:

- Արդյոք ՇՄԱԳ-ի և ՇՄՍԱԳ-ի հաշվետվության մեջ ներկայացված հանքավայրի շահագործման արդյունքում առաջացող փոշու տարածման հաշվարկները, ինչպես նաև առաջարկվող միջոցները, որոնք կարող են նվազեցնել և կանխել դրանց վտանգավոր ազդեցությունը, գիտականորեն հաստատված են, թե՛ ոչ:
- Հանքի շահագործման արդյունքում առաջացող բնապահպանական վնասների չափը, ինչպես նաև հանքի վերականգման համար նախատեսված ժամանակահատվածն ու ծախսերի չափը արդյոք ճշգրտորեն հաշվարկվել են և հաստատվել ՇՄԱԳ-ի և ՇՄՍԱԳ-ի հաշվետվություններում:
- Հաշվի առնելով Ամուլսարի հանքի գտնվելու վայրը, դրա աշխարհագրական դիրքը, հարակից բնակավայրերը և առողջարանային հանգստավայրերը, արդյոք բաց հանքափոսերի, կույտերի ալկալահանման և անմշակ ժայռերի օջախների շահագործումը կարող է համարվել անվտանգ, եթե՛ ոչ, ապա ինչպիսի բնապահպանական վնաս կարող է այն առաջացնել:
- Արդյոք ՇՄԱԳ-ի և ՇՄՍԱԳ-ի հաշվետվություններում նշված արտադրության ընթացքում իրականացված պահեստավորման, փոխադրման, թունավոր և վտանգավոր նյութերի կիրառման գործընթացները կատարվում են կանոնակարգի և միջազգային ստանդարտներին համապատասխան: Արդյոք կա որևէ գործողության պլան, ըստ որի բնական աղետների դեպքում հնարավոր կլինի կանխել արտանետումներն ու արտահոսքերը, եթե՛ այո, արդյոք այս գործողության պլանը գիտականորեն հաստատված է և բավարար, թե՛ ոչ:
- Արդյոք Ամուլսարի հանքարդյունաբերական համալիրի շրջակայքում տեղի ունեցած սողանքները ներառված են ՇՄՍԱԳ-ի եւ ՇՄԱԳ հաշվետվություններում և հավելվածներում: Այս հաշվետվություններում արդյոք ներառված են շահագործման արդյունքում հնարավոր սողանքների՝ գիտականորեն հաստատված հաշվարկումները, և ինչպիսի երկրաբանական վնաս և հիդրոլոգիական աղտոտվածություն կարող է այն առաջացնել հատկապես Ջերմուկի հանքային ջրավազանին:
- Արդյոք ՇՄՍԱԳ-ի և ՇՄԱԳ-ի հաշվետվություններում ներառված են հանքի շահագործման արդյունքում մարդկային միջավայրի, օդային, հողային եւ ջրային ռեսուրսների պատճառված տնտեսական եւ ֆինանսական վնասների համապարփակ գնահատում: Արդյոք այս տվյալները գիտականորեն հաստատված և ճշգրիտ են, եթե՛ ոչ, ապա որքան է այս փաստացի վնասի ֆինանսական և տնտեսական աստիճանը:

- Արդյոք ՇՄԱԳ-ի և ՇՄՍԱԳ-ի հաշվետվությունները, ինչպես նաև հանքի փակման ծրագիրը ներառում է բերրի հողի պահպանության և վերականգնման, ինչպես նաև համապատասխան հանքի բարելավման հետ կապված ծախսերի վերաբերյալ մանրամասն և գիտականորեն հաստատված տվյալներ:

Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած թվով 2 միջազգային մասնագիտական ընկերություններն 10.12.2018 թվականին և 11.12.2018 թվականին էլեկտրոնային փոստով ուղարկել են տեխնիկական առաջադրանքին համապատասխան գործողությունների պլանը, մասնագետների ցանկը և գնային առաջարկները:

20.11.2018 թվականին Կոմիտեի նախագահը ստորագրել է «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի վարույթում քննվող քրեական գործով նշանակված համալիր փորձաքննության շրջանակներում միջազգային մրցույթի կազմակերպման, անցկացման, արդյունքների ամփոփման նպատակով մրցութային հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» թիվ 185-Ա հրաման:

Համաձայն նշված հրամանի, միջազգային մրցույթ կազմակերպելու, անցկացնելու, արդյունքներն ամփոփելու նպատակով ստեղծված մրցութային հանձնաժողովը քննարկել է նշված ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը, կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ և վերլուծություններ, ինչի արդյունքում 15.01.2019թ. նախապատվությունը տվել է մրցույթին մասնակցած Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերությանը, որը առաջարկել է 311170 (երեք հարյուր տասնմեկ հազար հարյուր յոթանասուն) ԱՄՆ դոլար գնային առաջարկ (առանց հարկերի):

Մրցութային հանձնաժողովը նախապատվության հարցը լուծել է հետևյալ հիմնավորմամբ.

- WSP UK Ltd կազմակերպությունը ներկայացրել է ավելի ցածր գնային առաջարկ, քան Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերությունը :

Այս առումով մրցութային հանձնաժողովը կատարել է բանավոր հարցումներ և խորհրդատվություններ ուղրտի մի շարք միջազգային փորձառու մասնագետների և փորձագետների հետ, ըստ որոնց՝ WSP UK Ltd կազմակերպության կողմից ներկայացված գնային առաջարկը շուկայականից զգալիորեն ցածր է, ինչը կարող է պայմանավորված լինել նախատեսված քիչ ժամային աշխատանքներով: Հաշվի առնելով տեխնիկական առաջադրանքում նշված և ուսումնասիրության ենթակա ոլորտների լայն և տարաբնույթ շրջանակը, քիչ ժամային աշխատանքների իրականացումը կարող է ազդել տրվող վերջնական եզրակացության որակի վրա:

- Մրցութային հանձնաժողովը իրականացրել է լրացուցիչ ուսումնասիրություններ, որի արդյունքում ձեռք են բերվել տեղեկություններ այն մասին, որ 2014 թվականին WSP UK Ltd ընկերությունը «Թեղուտ» ՓԲ ընկերության պատվերով մշակել է Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի նախագծի շրջանակներում ջրային ռեսուրսների և արտահոսքերի կառավարման պլան, որով սահմանվել են ջրերի

արդյունավետ կառավարման բնագավառի հիմնական ռիսկերը, վերահսկողությունը և կանխարգելման միջոցները:

«Վալեքս» խմբի ընկերությունների 2018 թվականի փետրվարի 2-ին տարածած հաղորդագրության համաձայն՝ «...Մինչ ներգրավված մասնագիտացված կազմակերպություններից առաջադրված խնդիրների վերաբերյալ հիմնավոր համակարգային լուծումներ ստանալն ու դրանց կենսագործման վերաբերյալ որոշումներ կայացնելը, Ընկերությունը ձեռնպահ է մնում ներկա ծավալներով հանքավայրի շահագործումից ու համապատասխան արտադրանք թողարկելուց»:

Վերոգրյալից ելնելով՝ մրցութային հանձնաժողովը նախապատվությունը տվել է Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերությանը:

ELARD ընկերությունը ներկայացրել է ELARD և TRC ընկերությունից հրավիրված փորձագետների հետևյալ ցանկը.

1. **Րիկարդո Խուրի-** Նախագծի համակարգող: Ամերիկյան համալսարանում ստացել է մագիստրոսի աստիճան բնապահպանական և ջրային ռեսուրսների ինժեներիայի ոլորտում և ունի ավելի քան 22 տարվա աշխատանքային փորձ շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման ոլորտում, ինչպես նաև աշխատել է տարբեր ոլորտներում, ինչպիսին են էներգետիկան, հանքարդյունաբերությունը, արտադրությունը, շինարարությունը և ենթակառուցվածքները նորագույն տեխնոլոգիաներով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հետ կապված դասընթացներ : Բացի այդ, նա փարձառու է բազմաբնույթ կարգապահական թիմերի ղեկավարման և բարդ ծրագրերի իրականացման ոլորտում:

2. **Դր. Նիդալ Ռաբահ-** Առաջատար հիդրոերկրաբան, գիտությունն էրի թեկնածու, ՊԵ, ԼՍՐՊ, ՊՄՊ, ունի ավելի քան 30 տարվա աշխատանքային փորձ և հսկայական փորձ էներգետիկայի, նավթաքիմիայի, արդյունաբերական և առևտրային օբյեկտների, օդանավակայանների, հանքերի և աղբավայրերի շրջակա միջավայրի բարելավման լայնամասշտաբ ծրագրերի պլանավորման, մշակման և կառավարման ոլորտում՝ տարբեր կարգավորիչ ծրագրերի շրջանակներում: Նա ղեկավարել է մի շարք վերականգնողական և տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ՝ ուղղված LNAPL / DNAPL, նավթային ածխաջրածինների, VOCs- ի, BNS- ի, մետաղների և այլն ազդեցության ուսումնասիրությանը: Նրա փորձը ներառում է պահեստավորման համակարգերի նախագծում և իրականացում, ինչպես նաև պայմանական և նորարարական տեղում վերականգնողական և ջրի մաքրման տեխնոլոգիաներով աշխատանք: Նա մշակել է ստորգետնյա ջրերի հոսքի և աղտոտման և տեղափոխման մոդելներ և վերահսկել է առաջադեմ բնութագրման մեթոդների կիրառումը, այդ թվում՝ բարձրորակ գծային գործիքներ, դատաբժշկական վերլուծություն և ուսումնասիրություններ: Դոկտոր Ռաբահը աշխատում է որպես բնապահպանական և բնական ռեսուրսների վնասման հետ կապված պահանջների գծով դատավարության փորձագետ: Նա աշխատել է SSԿԿ-ի համալիրների վերականգնման կառավարման թիմում:

3. **Դոկտոր Դեյվիդ Հեյ-** Առաջատար երկրաբան, երկրաքիմիկոս, գիտությունն էրի թեկնածու, ՍՊԳ, Դոկտոր Դեյվիդ Հեյը 38 տարվա աշխատանքային փորձ ունեցող երկրագիտնական է, այդ թվում՝ փորձառու է հանքարդյունաբերական նախագծերի լայնածավալ աշխատանքի իրականացմանը: Նա երկրաբանական,

հիդրոերկրաբանական, աշխարհաքիմիական և երկրաֆիզիկական փորձաքննություն պահանջող ծրագրերի գծով ավագ վերլուծաբան, մոդելավորող, խորհրդատու և վերանայող է: Նրա մասնագիտական ակադեմիական վերապատրաստումը և փորձը կոշտ ժայռապատկերային երկրաբանության և հանքաքարի հանքավայրերի և կառուցվածքի ոլորտում նպաստում են հանքարդյունաբերության խնդիրները վերլուծելու և լուծելու նրա ունակությանը:

4. **Դոկտոր Ռոբերտ Սթենֆորդ**- ՏՂՕ և թափոնների կառավարման փորձագետ, գիտությունն էրի թեկնածու, Դոկտոր Սթենֆորդը ունի ավելի քան 30 տարվա աշխատանքային փորձ, այդ թվում՝ ավելի քան 20 տարվա վտանգավոր թափոնների մշակման և բնապահպանական վերլուծության փորձ: Նա փորձառու է թափոնների մաքրման առանձնահատկությունների, գնահատման, վտանգավոր թափոնների, մասնավորապես ծանր մետաղների վերականգնողական տեխնոլոգիաների մշակման և կիրառման ոլորտում, ինչպես նաև ջրի և կեղտաջրերի աղտոտիչների վերականգնման մեթոդների մշակման և իրականացման ոլորտում: Բոբը ունի 11 արտոնագիր վտանգավոր թափոնների մշակման մեթոդների և ծանր մետաղները հողից կամ թափոններից մաքրելու ոլորտում: Նա հեղինակել և ներկայացրել է թափոնների վերամշակման և բնապահպանական վերլուծության վերաբերյալ ավելի քան 60 տեխնիկական գործ: Նրա աշխատանքը կենտրոնացած է ոչ նյութական անօրգանական աղտոտիչների, ինչպիսիք են կապարը, կադմիումը, ցինկը, վեցանկյուն քրոմը և մկնդեղը թափոնների և ստորերկրյա ջրերի, ներթափանցման նորարարական ուղիների մշակման վրա: Բացի այդ, նա աշխատել է լեռնահանքային արդյունաբերության մեջ՝ ցեմենտի փոշու, խողովակային գազի աղբահանման թափոնների ոլորտում: Նա 10 տարի անցկացրեց Սինգապուրի ազգային համալսարանում բնապահպանական քիմիայի բնագավառում՝ երկաթի օքսիդների և ֆոսֆատների և մկնդեղի տեսակների միջև ռեակցիաների ուսումնասիրության հետ կապված հետազոտություններ իրականացնելով Նա ունի մեծ փորձ թթու ջրերի հեռացման գնահատման և կառավարման ոլորտում:

5. **Ռամեզ Քայալ**-ավագ երկրաբան, անկախ փորձագետ, Ունենալով ավելի քան 35 տարվա փորձ պարոն Քայալը ճանաչված երկրաբան է ԱՄՆ-ում, Մերձավոր Արևելքում և Կասպից ծոցի երկրներում՝ երկրաբանական և հիդրոերկրաբանական, գնահատականներ իրականացնող ապացուցված փորձով: Նա ղեկավարել է խոշոր երկրաբանական և հիդրոերկրաբանական գնահատման գործընթացները, այդ թվում՝ գեոդեզիական երկրաբանական մոդելների և ստորերկրյա թվային մոդելների մշակումը: Նա կաջակցի թիմին ջրի պաշարների և երկրաբանության վրա ազդեցությունների գնահատականները վերանայելու հարցում:

6. **Ալեքսանդր Կուլչիեր**- Ավագ կենսաբազմազանության փորձագետ, ով ունի մոտ 20 տարվա միջազգային փորձագետի փորձ: Նա հանքարդյունաբերության, էներգետիկայի, ենթակառուցվածքների և արդյունաբերական ոլորտներում ՇՄՍԱԳ-ի համար ստացել և ղեկավարել է ավելի քան 1500 կենսաբազմազանության ուսումնասիրություն: Միջազգային փորձագետ, ով ունի ճանաչված փորձ Եվրոպայում, Մերձավոր և Միջին Արևելքում, Աֆրիկայում, Հարավային Ամերիկայում, Կարիբյան և Հնդկական օվկիանոսում: Խորհրդատվություն է մատուցել էկոլոգիայի ոլորտում Եվրոպայում տարբեր կառավարություններին, խոշոր միջազգային արդյունաբերական ընկերություններին:

7. **Դր. Կարլա Խաթեր-** գիտությունների թեկնածու Ավագ կենսաբազմազանության փորձագետ/հանքարդյունաբերության վերականգնողական փորձագետ, հանքավայրերի էկոլոգիական վերականգնման ոլորտի գիտությունների թեկնածու է, և ունի մոտ 20 տարվա աշխատանքային փորձ: Նա ճանաչված էկոլոգիայի փորձագետ է և կաջակցի կենսաբազմազանության, վրա ազդեցությունների գնահատման վերանայմանը:

8. **Դր. Չարբել Աֆիֆ-** գիտությունների դոկտոր օդի որակի ավագ փորձագետ, ստացել է Ֆրանսիայի մթնոլորտային գիտությունների դոկտորի կոչում և ունի շուրջ 15 տարվա փորձ օդի որակի հետազոտությունների անցկացման ոլորտում, այդ թվում՝ նախնական ուսումնասիրությունների, օդափոխության մոդելավորման ուսումնասիրությունների և տարբեր ծրագրերի, այդ թվում՝ օդի որակի վրա հանքարդյունահանման նախագծերի ազդեցության վերաբերյալ: Նա կղեկավարի օդի որակի վրա ազդեցությունների գնահատման ուսումնասիրությունը:

17.01.2019 թվականին Կոմիտեի նախագահը թիվ 01/22/706-19 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետին, խնդրելով ՀՀ վարչապետի հանձնարարականը՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով նախատեսված ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին Կոմիտեին հատկացնել է 311170 (երեք հարյուր տասնմեկ հազար հարյուր յոթանասուն) ԱՄՆ դոլար գումար (առանց հարկերի)՝ Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերության հետ պայմանագիրը կնքելու և հետագա գործընթացները կազմակերպելու նպատակով:

23.01.2019 թվականին ստացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականը՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը և Կոմիտեին, 5 օրյա ժամկետում հարցը համատեղ քննարկելու և առաջարկություն ներկայացնելու վերաբերյալ:

30.01.2019 թվականին թիվ 01/22/1473-19 գրությամբ Կոմիտեն անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

04.02.2019 թվականին Կոմիտեի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ), որը թիվ 02/22/1821-19 գրությամբ ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն կարծիքի:

Նախագծում նշվել է 396.900 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ գումար, որից՝ 311170 (երեք հարյուր տասնմեկ հազար հարյուր յոթանասուն) ԱՄՆ դոլար գումարը Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերության հետ պայմանագիրը կնքելու և հետագա գործընթացները կազմակերպելու համար, իսկ 77793 (յոթանասունյոթ հազար յոթ հարյուր իննսուներեք) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամը, որպես շահութահարկի գումար, որը ՀՀ պետական բյուջե է վճարվելու Կոմիտեի կողմից:

11.02.2019 թվականին թիվ 01/8-2/1880-19 գրությամբ ստացվել է ՀՀ ֆինանսների նախարարության դրական եզրակացությունը՝ Նախագծի վերաբերյալ:



12.02.2019 թվականին թիվ 01/22/2392-19 գրությամբ Նախագիծն ուղարկվել է ՀՀ արդարադատության նախարարություն՝ կարծիքի (13.02.2019թ-ի դրությամբ կարծիք չի ստացվել):

13.02.2019 թվականին ստացվել է ՀՀ վարչապետի հանձնարարականը՝ 5 օրյա ժամկետում, ընկերությանը վճարվող գումարի մասով հարկային պարտավորությունների 77.793 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով գումարի հարցը լուծելու վերաբերալ:

2019թ. փետրվարի 21-ի թիվ 148 որոշմամբ ՀՀ քննչական կոմիտեին 2019թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված պահուստային ֆոնդից հատկացվել է 396.900 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ՝ Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերության պայմանագիր կնքելու և հետագա գործընթացները կազմակերպելու նպատակով:

2019թ. մարտի 15-ին ՀՀ քննչական կոմիտեի և Earth link & Advanced Resources Development (ELARD) ընկերության միջև կնքվել է համապատասխան պայմանագիր:

2019թ. մարտի 18-ին քրեական գործով նշանակվել է էկոլոգիական, երկրաբանական, հիդրոլոգիական, երկրաֆիզիկական, քիմիական, շինարարատեխնիկական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվել է Advanced Resources Development (ELARD) ընկերության փորձագետների խմբին: Վերջիններս ձեռնամուխ են եղել փորձաքննության իրականացմանը:

Համալիր փորձաքննության շրջանակներում միջազգային փորձագիտական խմբի կողմից իրականացվել է՝

1.Ջրային ռեսուրսների վրա ազդեցության գնահատում (Սևանա լիճը, Սպանդարյան-Կեչուտ թունելը և ջրամբարը, Արփա, Դարբ և Որոտան, Ջերմուկի աղբյուրները, ստորգետնյա ջրային ավազանները),

2.Երկրաբանության վրա ազդեցության գնահատում,

3.Կենսաբազմազանության վրա ազդեցության գնահատում,

4.Օդի որակի վրա ազդեցության գնահատում,

5.Համալիր փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ առաջ քաշված թվով 15 հարցերի օբյեկտիվ պարզաբանում:

Փորձագետների խումբը Հայաստանի Հանրապետություն առաջին այցելությունն իրականացրել են 2019թ. մարտի 26-ից 30-ը:

Մարտի 27-ին ՀՀ քննչական կոմիտեի նախագան ընդունել է փորձագիտական խմբին: Հանդիպման ընթացքում կետ առ կետ քննարկվել են Ամուլսարի ոսկեբեր քվարցիտային հանքի շահագործման նպատակով նշանակված համալիր փորձաքննության կատարման ժամկետները և գործողությունների հաջորդականությունը: Ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ փորձաքննության նախնական եզրակացությունը ստանալ 2019թ. մայիսի 31-ին:

2019թ. մարտի 28-ին ՀՀ քննչական կոմիտեում, համաձայն նախապես կազմված օրակարգի, վարույթն իրականացնող մարմնի գլխավորությամբ տեղի են ունեցել հանդիպում-քննարկումներ փորձագիտական խմբի և տեղական փորձագետների, ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչների, ոլորտի այլ մասնագետների և կառույցների ներկայացուցիչների հետ:

Նույն օրը ՀՀ քննչական կոմիտեում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը փորձագետներին ներկայացրել է Ամուլսարի նախագծի երկրաբանության և ջրային ռեսուրսների վերաբերյալ պրեզենտացիա:

Փորձագիտական խումբը մարտի 29-ին, վարույթն իրականացնող մարմնի գլխավորությամբ, այցելել է Ամուլսարի ոսկեբեր քվարցիտային հանքավայր, այնուհետև՝ հանքի ապարների ստուգման, երկրաբանական փորձանմուշների նախապատրաստման և մշակման լաբորատորիա:

Նույն օրը երեկոյան փորձագիտական խմբի հետ ամփոփվել են նախորդ օրերին կատարած աշխատանքները: Կոնկրետ ուղղություններով տեղեկատվության փոխանակման շուրջ ձեռք են բերվել պայմանավորվածություններ:

Փորձագետների խումբը ապրիլ-մայիս ամիսներին ներկայացրել է մեկական Գործողությունների պլան, իսկ յուրաքանչյուր ամիսը մեկ՝ Ընթացիկ հաշվետվություն կատարված աշխատանքների, տրամադրված փաստաթղթերի, փաստաթղթային բացերի և հետագա հաշվետու ժամանակահատվածում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ: Մայիսի 15-ին ներկայացված Ընթացիկ հաշվետվությամբ արձանագրվել է, որ որևէ փաստաթղթային բաց կամ պակասող տվյալներ չկան փորձաքննությունը լիարժեք կատարելու և մայիսի 31-ին նախնական եզրակացությունը՝ ըստ պլանավորված ժամկետի, ներկայացնելու համար:

Քրեական գործի հարուցումից հետո վարույթն իրականացնող մարմինը իրականացրել է մեծածավալ քննչական և դատավարական գործողություններ, կատարվել են առգրավումներ, հարցաքննություններ, այլ դատավարական գործողություններ:

Քննության ընթացքում ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ից առգրավվել էին «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից կազմված և լիազոր մարմնին ներկայացրած ողջ փաստաթղթերը, այդ թվում նաև՝ ՇՄԱԳ, ԲՍԱԳ հաշվետվությունները, դրանց կից հավելվածները, պետական այլ մարմիններից ուսումնասիրման համար պահանջվել և ստացվել են մեծածավալ նյութեր և փաստաթղթեր:

Նախաքննության ընթացքում ՀՀ քրեադատավարական օրենքով սահմանված կարգով ստացվել և փորձագետներին են տրամադրվել.

- «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից կազմված և լիազոր մարմնին ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությունը՝ կից հավելվածներով, որը ՀՀ քննչական կոմիտեի միջոցով թարգմանվել է անգլերեն լեզվով,

- «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից կազմված և լիազոր մարմնին ներկայացված ԲՍԱԳ հաշվետվությունը՝ կից հավելվածներով, անգլերեն լեզվով,

- «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից վարույթն իրականացնող մարմնի միջոցով փորձագետներին տրամադրվել է փորձագետների կողմից պահանջված շուրջ 300 անուն փաստաթղթեր և ելակետային տվյալներ, որից միայն փաստաթղթերը՝ շուրջ 20.000 թերթ,

- ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան ստորաբաժանման կողմից անգլերեն լեզվով թարգմանվել և փորձագետներին են տրամադրվել՝

- «Տեխնիկական անվտանգության ապահովման ազգային կենտրոն» ՊՈԱԿ եզրակացությունները,
- ՀՀ առողջապահության նախարարության եզրակացությունը,
- ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի եզրակացությունը,
- ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի եզրակացությունը,
  - Բուլղարիայի «Վայրի բնության բալկանյան միության», «CEE Bankwatch Network» կազմակերպության և Հայաստանի «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ-ի համատեղ հաշվետվությունը, «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից դրա վերաբերյալ մեկնաբանությունները,
  - ՀՀ արդարադատության նախարարության «ՀՀ ԱՆ թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ից ստացված բնապահպանության բնագավառի շուրջ 30 իրավական ակտեր՝ անգլերեն լեզվով (օրենսգրքեր, օրենքներ, ՀՀ կարմիր գիրք, ենթաօրենսդրական ակտեր),
  - ՀՀ բնապահպանության նախարարությունից պահանջվել և ստացվել են.
- Ամուլսարի հանքարդյունաբերական համալիրի տարածքում և հարակից տարածքներում իրականացված ստորգետնյա և մակերևութային ջրերի մոնիթորինգի տվյալները 2006 թվականից սկսած (Excel ֆորմատով),
- Նմուշների ստացման, ուսումնասիրման ընթացակարգի, լաբորատոր հետազոտությունների արդյունքների, այդ թվում՝ լաբորատորիայի սերտիֆիկացման վերաբերյալ տեղեկատվություն և վերլուծական արձանագրությունները,
- մակերևութային ջրերի և ստորգետնյա ջրերի տվյալները («ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն» ՊՈԱԿ 2019թ)
- ՀՀ քարտեզ՝ պահպանվող տարածքների տեղակայվածության, տարածվածության (այդ թվում՝ պարկերը և արգելավայրերը Հայաստանում, Նախագծի մեջ ընդգրկված պահպանվող տարածքները) վերաբերյալ:
- ՀՀ բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ղեկավարի՝ Golder Associates ընկերության կողմից կատարված ջրերի հետազոտության արդյունքների վերլուծությունները,
  - ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունից՝ Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքարդյունաբերական համալիրի տարածքի գիտական, երկրաբանական ուսումնասիրությունների արդյունքները, զեկույցները, քարտեզները, հաշվետվությունները,
  - ՀՀ ԳԱԱ «Երկրաբանական գիտությունների ինստիտուտ» ՊՈԱԿ-ից պահանջված և ստացված՝
    - Հայ-Շվեյցարական համագործակցության արդյունքում տպագրված և միջազգային կոնֆերանսում ներկայացված գիտաժողովի նյութ (աբստրակտ),
    - Պովեր Պոյնթ (Power Point) ծրագրով զեկույց,

➤ Հայ-ռուսական համագործակցության շրջանակներում 2014-2015թթ իրականացված Ջերմուկ հանքային ջրերի բարձր ճշտությամբ իզոտոպային անալիզների տվյալները՝ իրականացված արտերկրում,

- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանական և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ից՝ անգլերեն լեզվով, էլեկտրոնային տարբերակով (Excel ֆորմատով) Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքարդյունաբերության համալիրի տարածքում իրականացված մոնիթորինգի տվյալները՝ եղանակային, (ժամային) քամու արագության և ուղղության վերաբերյալ, սկսած 2009 թվականից,

- «Civil Voice» (Հասարակական ձայն) ՀԿ-ի պատվերով իրականացված ջրերի իզոտոպային անալիզների տվյալները,

- «Հայկական բնապահպանական ճակատ» ՀԿ-ի կողմից տրամադրված տեղեկատվությունը, այդ թվում նաև՝ Բրոնոզյանի փորձագետների հաշվետվությունները,

- WWF Հայաստանից՝ Ամուլսարի ՇՄԱԳ-ի վերաբերյալ կարծիքը, Վայրի բնության բալկանյան միության հաշվետվությունը Ամուսարի նախագծի կեսաբազմազանության վրա ազդեցության 5 նոր գործոնների վերաբերյալ, WWF Հայաստանի տնօրեն Կարեն Մանվելյանի զեկույցը Ամուլսարի կենսաբազմազանության վերաբերյալ,

Հայերեն լեզվից անգլերեն թարգմանվել և փորձագիտական խմբին են տրամադրվել նաև նախաքննության ընթացքում կատարված քննչական գործողությունների, հարցաքննությունների արձանագրություններ, մեծածավալ այլ փաստաթղթեր և ելակետային տվյալներ:

Մայիսի 15-ին ներկայացված Ընթացիկ հաշվետվությամբ արձանագրվել է, որ որևէ փաստաթղթային բաց կամ պակասող տվյալներ չկան փորձաքննությունը լիարժեք կատարելու և մայիսի 31-ին նախնական եզրակացությունը՝ ըստ պլանավորված ժամկետի, ներկայացնելու համար:

Փորձագիտական խմբի պահանջով «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից տրամադրվել են Գոլդեր ընկերության սեփականություն հանդիսացող ջրային մոդելների վերաբերյալ շուրջ 112 output/input ֆայլեր, որոնց ուսումնասիրման համար պահանջվել է լրացուցիչ ժամանակ, ինչի կապակցությամբ փորձագիտական խումբը վարույթն իրականացնող մարմնին տեղեկացրել է, որ մայիսի 31-ին կներկայացվի մասնակի Նախնական եզրակացություն, իսկ այնուհետև՝ հունիսի 14-ին, թարմացված ամբողջական Նախնական եզրակացություն:

Համալիր փորձաքննության որոշման կայացումից անմիջապես հետո՝ մարտ-մայիս ամիսների ընթացքում փորձագիտական թիմի հետ վարույթ իրականացնող մարմնի կողմից իրականացվել է ամենօրյա նամակագրական կապ, պարբերաբար փորձագետների հետ ճշտվել և թարմացվել է տրամադրվող ելակետային տվյալների բազան, կատարվել են ճշտումներ:

Փորձագիտական խմբի կողմից Նախնական եզրակացությունը ներկայացվել է 2019 թվականի մայիսի 31-ին, անգլերեն լեզվով, իսկ հունիսի 14-ին փորձագետները ներկայացրել են թարմացված ամբողջական Նախնական եզրակացությունը:

Հունիսի 19-ին փորձագետների խումբը ժամանել է Երևան, որտեղ 20-ին և 21-ին փորձաքննության արդյունքները ներկայացրել է վարույթն իրականացնող մարմին: Հանդիպում-քննարկումներ են տեղի ունեցել վարույթն իրականացնող մարմնի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ներկայացուցիչների հետ:

Նախնական եզրակացության ուսումնասիրման արդյունքում վարույթ իրականացվող մարմնի կողմից հունիսի 24-ին որոշում է կայացվել «Լիդիան Արմենիա» ընկերությանը ներգրավել որպես փորձաքննության կողմ, տրամադրվել է հունիսի 14-ին ստացված ամբողջական Նախնական եզրակացությունը անգլերեն լեզվով:

Հունիսի 27-ին փորձագետների խմբի և «Լիդիան Արմենիա» ընկերության ներկայացուցիչների միջև ՀՀ քննչական կոմիտեում վարույթն իրականացնող մարմնի մասնակցությամբ տեղի է ունեցել Սկայյա կոնֆերանս զանգ: Նույնօրինակ կոնֆերանս զանգ Օդի որակի և Կենսաբազմազանության թեմայով տեղի է ունեցել 2019 թվականի հուլիսի 1-ին:

Հունիսի 28-ին «Լիդիան Արմենիա» ընկերությունը ներկայացրել է երկրաբանության և ջրային ռեսուրսների վերաբերյալ Նախնական եզրակացության՝ իր մեկնաբանություններն ու պարզաբանումները: Նույն օրը փորձագետները «Լիդիան Արմենիա» ընկերության պարզաբանմանն են ուղարկել 12 լրացուցիչ հարցեր, որոնք պատասխանվել են հուլիսի 3-ին: Իսկ հուլիսի 4-ին «Լիդիան Արմենիա» ընկերությունը ներկայացրել է կենսաբազմազանության և օդի որակի վերաբերյալ Նախնական եզրակացության՝ իր մեկնաբանություններն ու պարզաբանումները:

Այս ընթացքում Նախնական եզրակացության վերաբերյալ մեկնաբանություններ են ներկայացրել նաև վարույթն իրականացնող մարմինը և ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը:

Այնուհետև փորձագետների խումբը հայտնել է, որ «Լիդիան Արմենիա» ընկերությանը որպես փորձաքննության կողմի ներգրավմամբ լրացուցիչ տեղեկություններ ուսումնասիրելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ Վերջնական եզրակացությունը տրամադրվելու է 2019 հուլիսի 22-ին:

Համալիր փորձաքննության Վերջնական եզրակացությունը՝ վերջնական սրբագրված 2019 թվականի օգոստոսի 7-ին փորձագետների կողմից ուղարկվել է վարույթն իրականացնող մարմնին, և դրա համապատասխան՝ կատարվել հայերեն թարգմանություն, որոնք 2019թ. օգոստոսի 14-ին տեղադրվել են ՀՀ քննչական կոմիտեի պաշտոնական կայքէջում:

Վարույթն իրականացնող մարմինը, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված իր իրավասությունների շրջանակներում, նախաքննության ընթացքում սույն քրեական գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով հավաքել, ստուգել և գնահատել է գործով ձեռք բերված ապացույցները: Սույն քրեական գործով համալիր փորձաքննության եզրակացությունը հանդիսանում է ապացույց, ինչը գնահատվել է վարույթն իրականացնող մարմնի կողմից նախաքննության ընթացքում ձեռք բերված այլ փաստական տվյալների համակցության մեջ: Քննության ընթացքում համալիր փորձաքննության եզրակացությունը չի հերքվել քրեական գործով ձեռք

բերված այլ ապացույցներով, հետևաբար՝ վարույթն իրականացնող մարմնի հետևությունները բխում են վերը նշված փորձաքննության և գործով ձեռք բերված այլ փաստական տվյալների՝ իրենց համակցության մեջ գնահատման արդյունքներից:

Այսպիսով, վերլուծելով և գնահատելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, վարույթն իրականացնող մարմինը գտնում է, որ նախաքննության ներկա փուլում՝ այս պահին, բացակայում են «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության կողմից Անուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման հետ կապված՝ շրջակա միջավայրի աղտոտման մասին տեղեկություններ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնատար անձանց կողմից դիտավորությամբ թաքցնելու համար որևէ մեկին քրեական հետապնդման ենթարկելու հիմքերը:

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության  
Գլխավոր վարչություն